

## ՏԵՂԵԿԱՆՔ

### 2011 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների արդյունքների վերաբերյալ

ԼՂՀ կառավարության 2011թ մայիսի 31-ի N 350-Ն որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2011թ.հունիսի 8-ի նիստում հաստատել է 2011թ. սեպտեմբերի 18-ին կայանալիք ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը և աշխատանքային պլանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նախապատրաստելու և պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Մշակվել, հաստատվել, հրապարակվել, ընտրական հանձնաժողովներին և ընտրական գործընթացի մյուս մասնակիցներին են ուղարկվել ԿԸՀ մի շարք որոշումներ, կարգեր, ուղեցույցի նոր տարբերակ, ՏԸՀ անդամների, վստահված անձանց, դիտորդների, ԶԼՄ ներկայացուցիչների համար, ինչը որոշակիորեն նպաստել է ընտրական օրենսգրքի դրույթների և պահանջների միատեսակ կիրարկմանը:

Ժամանակին լուծվել են ընտրությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման, քարոզչական նյութերի պատրաստման, քվեարկության սենյակների կահավորման, քվեաթերթիկների տպագրման և ընտրական հանձնաժողովներին դրանց առաքման հարցերը:

Ընտրությունների ընթացքում անխափան էլեկտրոնային կապ է ապահովվել ԿԸՀ-ի և ՏարԸՀ-ների միջև: ԿԸՀ կայքէջում անմիջապես տեղադրվել են ընտրական հանձնաժողովների գործունեությանը վերաբերող բոլոր նորությունները, հաղորդագրությունները և ամփոփ տվյալները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման հարցերը մշտապես գտնվել են հանրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում՝ նպատակաուղղելով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների գործունեությունը ընտրությունների ազատ, անկողմնակալ և արդարացի անցկացմանը:

Հանրապետության 227 համայնքներից 209-ում անցկացվել են ՏԻՄ ընտրություններ, ընդ որում 148-ում համայնքների ղեկավարների, 206-ում՝ համայնքի ավագանու անդամների ընտրություններ, 18 համայնքներում ընտրություններ չեն անցկացվել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը չլրանալու կապակցությամբ:

209 համայնքներում ինքնաառաջադրվել են 223 համայնքի ղեկավարի և 1226 ավագանու անդամի թեկնածուներ, որոնցից ինքնաբացարկի կամ տարբեր պատճառներով չեն գրանցվել համայնքի ղեկավարի 10 և ավագանու անդամի 11 թեկնածուներ և հետագայում ՏարԸՀ-ների կողմից գրանցվել են համայնքների ղեկավարների 213 և ավագանու անդամների 1215 թեկնածուներ: ԿԸՀ որոշմամբ հաստատված ցանկից ընտրություններ չեն կայացել՝

- Շուշիի շրջանի Քիրսավան համայնքում և Քաշաթաղի շրջանի Վաղազին համայնքում՝ համայնքի ղեկավարի թեկնածու չառաջադրվելու պատճառով.

- Քաշաթաղի շրջանի Գանձա համայնքում՝ ավագանու անդամների թվի առնվազն կեսին համապատասխան թվով թեկնածուներ չառաջադրվելու պատճառով.
- Ասկերանի շրջանի Քոասնու համայնքում համայնքի ղեկավարի առաջադրված միակ թեկնածուն չգրանցելու պատճառով (թեկնածուն չի ներկայացրել տեղեկանքներ վերջին մեկ տարում ԼՂՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին մեկ տարում համայնքում հաշվառում ունենալու մասին)

Օրենքով սահմանված ժամկետներում քվեարկությունից 3-9 օրվա ընթացքում պատրաստվել և տպագրության է ներկայացվել 148 համայնքի ղեկավարի և 206 համայնքի ավագանու անդամների ընտրության քվեաթերթիկների ձևեր, որոնք տպագրվելուց հետո հաշվարկվել և 3-5 օրվա ընթացքում ստացականներով հանձնվել է ՏարԸՀ-ներին:

Ընտրությունների օրը 209 համայնքների հիմնական և լրացուցիչ ընտրացուցակներում ընդգրկված 93247 ընտրողներից քվեարկությանը մասնակցել են 54646 ընտրողներ կամ նրանց 58,6%-ը:

2011 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով հանրապետությունում ընտրվել են 142 համայնքի ղեկավարներ և 206 համայնքներում՝ 1072 ավագանու անդամներ:

Հանրապետության որոշ համայնքներում տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների համաձայն համայնքի ղեկավարի ընտրությունը չկայացած է ճանաչվել Ասկերանի շրջանի Մադաթաշեն և Լուսաձոր, Հադրութի շրջանի Կարմրակուճ, Մարտունու շրջանի Պառավաթումբ, Քաշաթաղի շրջանի Արախիշ և Դրախտաձոր համայնքներում՝ միակ թեկնածուն քվեարկությանը մասնակցած ընտրողների կեսից պակաս քվեներ ստանալու պատճառով:

Տարածքային ընտրական հանձնաժողովներում քվեաթերթիկների վերահաշվարկի պահանջի դիմումներ են ստացվել Մարտունու շրջանի Մյուրիշենի և Մոսի համայնքների ղեկավարների թեկնածուների կողմից, որոնց արդյունքում ՏարԸՀ որոշումը մնացել է անփոփոխ: Անփոփոխ է մնացել նաև Մարտունու ՏարԸՀ որոշումը Մյուրիշենի համայնքի ղեկավարի ընտրության վերաբերյալ, քանի որ Մյուրիշենի համայնքի ղեկավարի թեկնածու Ռաֆիկ Խաչատրյանի հայքը՝ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, դատարանի վճռով մերժվել է:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման բոլոր փուլերում ընտրական հանձնաժողովների գործունեությունը, նախընտրական քարոզչության իրականացման և, հատկապես, քվեարկության կազմակերպման ու ընտրությունների արդյունքների ամփոփման աշխատանքները դիտարկում և լուսաբանում էին 7 միջազգային և 11 տեղական դիտորդներ, 31 լրագրողներ:

Դիտորդների կողմից նշվել է, որ ՏԻՄ ընտրություններն անցկացվել են ԼՂՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, ազատ մրցակցության և ժողովրդավարության պայմաններում:

Քվեարկության օրը ստացված դիմում-բողոքները հիմնականում բանավոր բնույթի էին, որոնք ընտրական հանձնաժողովների կողմից անհապաղ ուսումնասիրվել և ընթացքավորվել են: